



ԱԳՐՈՒԷԿՈԼՈԳԻԱՆ ՈՐՊԵՍ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾԻՔ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ինտեգրում Կենսաբազմազանության ազգային ռազմավարության և գործողությունների ծրագրում և կայուն զարգացում

**Քնարիկ Գրիգորյան - Հայ կանայք հանուն առողջության
և առողջ շրջակա միջավայրի ՀԿ**



ԵՐԵՎԱՆ-2026

ԱԳՐՈՆԵԿՈԼՈԳԻԱՆ ՈՐՊԵՍ ԼՈՒԾՈՒՄ

Ագրոէկոլոգիան գիտություն է, որն ուսումնասիրում է, թե ինչպես կարելի է գյուղատնտեսությունը կազմակերպել՝ հաշվի առնելով բնության օրենքները:

Ինչու՞ է կարևոր

- Պահպանում է շրջակա միջավայրը:
- Ապահովում է սննդային անվտանգությունը:
- Ապահովում է ավելի կայուն գյուղատնտեսություն:



ԱԳՐՈՒԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Էկոհամակարգեր

- կենսաբազմազանության պահպանում
- էկոհամակարգերի կայունացում

Հող

- օրգանական պարարտանյութերի կիրառում, մակրո-, մեզո-, միկրոէլեմենտների, հումինային նյութերի կուտակում, ածխածնի և ազոտի կուտակում
- հողի պահպանություն, որակի և կառուցվածքի բարելավում
- դեգրադացիայի կրճատում

Զուր


- ջրի խնայողություն
- կաթիլային ոռոգում
- մուլչապատում

Գյուղատնտեսություն

- ՎԴԻՊ-ի համակարգ, բույսերի բնական պաշտպանություն վնասատուներից
- թունաքիմիկատների կիրառման նվազեցում
- արհեստական պարարտանյութերի կիրառման նվազեցում
- բազմազան մշակաբույսերի մշակում / դիվերսիֆիկացիա
- տեղական սորտերի պահպանում

Կլիմա

- օգտագործվող մշակաբույսերի դիմակայուն սորտերի մշակում
- ռիսկերի նվազեցում



ԲԱՑԵՐ (ԽՆԴԻՐՆԵՐ)



Թեև Հայաստանը համարվում է հարուստ կենսաբազմազանություն ունեցող երկիր, այնուամենայնիվ, առկա է էկոհամակարգերի բարձր խոցելիություն: Տարածքի մինչև 81%-ը ենթակա է անապատացման ռիսկի:

Հայաստանի Հանրապետությունում կենսաբազմազանությունը գտնվում է զգալի ճնշման տակ՝ պայմանավորված մի շարք փոխկապակցված բնապահպանական և գյուղատնտեսական գործոններով՝

- հողերի դեգրատացիա (~70%-ը ռիսկի տակ) և անմշակ հողեր,
- ջրային ռեսուրսների ոչ արդյունավետ կառավարում,
- գյուղատնտեսական նշանակության հողերի մոտ 29%-ը չի օգտագործվում, արոտավայրերի ավելի քան 50%-ը դեգրադացված է, վարելահողերի շուրջ 50%-ը օգտագործվում է անարդյունավետ:
- տնտեսությունների բարձր մասնատվածություն,
- գիտելիքների և ֆինանսների սահմանափակ հասանելիություն:
- ագրոկենսաբազմազանության կորուստ,
- թունաքիմիկատների և արհեստական պարարտանյութերի գերօգտագործում,
- կլիմայի փոփոխություններ:

Սա ցույց է տալիս, որ անհրաժեշտ է համակարգային մոտեցում, ոչ թե առանձին ծրագրեր: Չնայած ներուժին, ագրոէկոլոգիան դեռ ինստիտուցիոնալացված չէ:



ՀՈՂԵՐԻ ԴԵԳՐԱԴԱՑԻԱՅԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Հողի ոչ կայուն կառավարում

- մոնոկուլտուրա
- ցանքաշրջանառության բացակայություն
- հողի գերշահագործում
- բուսածածկի կորուստ

Ջրային և տեխնիկական խնդիրներ

- ջրային ռեժիմի խախտում
- ոռոգման սխալ կառավարում
- հողի աղակալում

Բնական և էկոլոգիական գործոններ

- էրոզիա (ջրի անբավարարություն, քամի)
- անտառահատումներ
- արոտավայրերի գերբեռնվածություն

Քիմիական ազդեցություն


- թունաքիմիկատների գերօգտագործում
- սինթետիկ պարարտանյութերի գերօգտագործում
- հողի կենսաբանական հավասարակշռության խախտում

Կլիմայական գործոններ

- երաշտներ
- ջերմաստիճանի բարձրացում
- տեղումների անկանոնություն

ԱՆՏԱՌՀԱՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՈՉ ԲԱՎԱՐԱՐ ԳԱԶԱՖԻԿԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔ

Շամլուխ, Լեռնավան, Զրաշեն, Կաթնառատ, Լեռնանցք բնակավայրերը մասամբ են գազաֆիկացված, բնակչությունն աղքատ է, և մոտակա անտառից բնակիչներն անընդհատ փայտ են ձեռք բերում ջեռուցման համար: Նման վարվելակերպը մշտական պահանջարկի պայմաններում կարող է հանգեցնել մի շարք բնապահպանական խնդիրների ինչպես անտառի, այնպես էլ բնակելի տարածքի համար: Նման պայմաններում կենսաբազմազանության կորուստն անխուսափելի է:



ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Ջրային ռեսուրսների նվազումը ևս կարևոր մարտահրավեր է՝

- ջրի պաշարների կրճատում,
- ոռոգման աղբյուրների անհասանելիություն,
- ոռոգման համակարգերի մաշվածություն, բացակայություն, անբավարար զարգացում:




Սա հանգեցնում է համակարգի խոցելիության և կայունության նվազման:



ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԵՐՔԻ ԿՈՐՈՒՍՏԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐՈՎ

Ոռոգման ջրով ապահովվածությունը



Գարնանը Զրաշեն, Շնող, Սարալանջ բնակավայրերում սելավը լրիվ վնասել է կարտոֆիլի, գարու, ցորենի, բազուկի ցանքատարածքները: Սպիտակի համայնքապետարանը ֆերմերների կրած վնասը փոխհատուցել է սերմով կամ գումարով՝ կախված ցանքատարածքի չափից:

Ամռանը Զրաշեն, Արևաշող, Շենավան, Լեռնավան, Բլագոդարնոյե, Շնող, Մեծ Պարնի, Սարալանջ բնակավայրերում արձանագրվել է բարձր ջերմաստիճան և երաշտ: Երաշտի, բարձր ջերմաստիճանի և ձյան, անձրևի քիչ տեղումների, ոռոգման ջրի պակասության հետևանքով ցորենի, գարու բերքի կորուստը մեծ է եղել:



ԱԳՐՈՎԵՆՍԱԲԱԶՄԱԶՄԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՄՏ

Գյուղատնտեսությունում նկատվում է ագրոկենսաբազմազանության կորուստ՝

- տեղական սորտերի կորուստ,
- գենետիկական բազմազանության նվազում,
- խոցելիության աճ:



Պատճառներ՝

Տնտեսական

- ներկրված էժան արտադրանքի մրցակցություն
- բարձր արտադրական ծախսեր

Տեխնիկական


- գյուղատեխնիկայի պակաս
- տեխնոլոգիական սահմանափակումներ

Սոցիալական

- ֆերմերների գիտելիքների պակաս
- գյուղատնտեսությունից հրաժարում

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Եկամուտների կրճատումը պայմանավորված է նաև տեղական գյուղմթերքների և արտերկրից ներկրված էժանագին ապրանքների միջև շուկայական մրցակցությամբ, որի դեպքում վաճառք իրականացնելիս ֆերմերների 70 %-ը գյուղմթերքները ստիպված է վաճառել ինքնարժեքից ցածր գնով:



ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Ագրոտեխնիկական մեթոդների բացակայությունը, հողի պարարտացման բացակայությունը կենսահումուսով կամ կոմպոստով, ցանքաշրջանառության իրականացման բացակայությունը, թունաքիմիկատների և հանքային պարարտանյութների ձեռքբերման ծախսերի ավելացումը, որն էլ իր հերթին արագացնում է հողի քայքայումն ու հողատարածքի անապատացումը, նվազեցնում հողի բերրիությունը:

Նման միտում է նկատվում Սարամեջում, Լեռնավանում, Լեռնանցքում, Կաթնառատում, Շամլուխում, Մեծ Պարնիում, Սարալանջում:

Մեծ ծախսերի, ցածր բերքատվության և եկամտի բացակայության պայմաններում բնակիչները հրաժարվում են վարել գյուղատնտեսություն, աշխատանք են փնտրում քաղաքներում:


Ագրոտեխնիկայի ձեռք բերում
Լոռու և Կոտայքի մարզերում:



ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԿԱՊՎԱԾ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐՈՎ ՈՉ ԲԱՎԱՐԱՐ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՈՒՈՒԹՅԱՆ Ն ՀԵՏ



Անբավարար ջրային ռեսուրսները և գյուղատնտեսական մշակաբույսերի ցածր բերքատվությունը հանգեցնում են բնակավայրում գյուղատնտեսության ոլորտում աշխատող ֆերմերների մոտ 51 % աշխատատեղերի կրճատմանը (Գեղադիր, Մայակովսկի, Գետամեջ, Զրաբեր, Զորաղբյուր):



Ֆերմերները ստիպված են աշխատանք փնտրել բնակավայրից դուրս կամ մայրաքաղաքում կամ մեկնել արտերկիր գումար վաստակելու, ընտանիքը պահելու համար: Սա ավելացնում է արտագաղթողների թիվը: Ֆերմերների որոշ տնտեսություններ, չկարողանալով ձեռնարկել այլ քայլեր, սնանկանում են և համալրում աղքատների շարքերը:

ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կլիմայական փոփոխություններն ավել են սրում բոլոր առկա խնդիրները:

Ծայրահեղ երևույթներ

- քամիներ
- կարկուտ
- ջրհեղեղներ

Ջերմաստիճան

- վաղ գարնանային ցրտահարություն
- ամռանը բարձր ջերմաստիճան

Տեղումներ

- անկանոն տեղումներ

Երաշտ

- երկարատև երաշտներ
- հողի խոնավության նվազում


Արդյունքում՝ ագրոհամակարգերի անկայունություն



ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԵՂԱՆԱԿԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ


Կարկտահարությունը վնաս է հասցրել թիրախային 10 բնակավայրի՝ Սարամեջ, Զրաշեն, Արևաշող, Լեռնավան, Լեռնանցք, Բլազողարնոյե, Կաթնառատ, Շամլուխ, Շնող, Սարալանջ: Շնող բնակավայրում կարկուտը վնասել է տանիքները և կոտրել պատուհանների ապակիները: Մեծ Պարնիում 2-3 տարի առաջ կարկտի և քամու հետևանքով ցորենի հասկերը ջարդվել էին, հնարավոր չէր եղել կոմբայնով բերքը հավաքել, բանջարաբուստանային մշակաբույսերի բերքն էլ փչացել էր:

Բնակավայրերի կողմից նշված բնական աղետներ՝ երաշտ և կարկուտ



ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԿԱԽՎԱԾ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ



Վաղ ցրտահարության և կարկտահարության հետևանքով՝ կախված վնասի աստիճանից և ծառերի տեսակից, դիտվել է ծաղկաթափ, պտղաթափ, պտղի դեֆորմացիա, բերքը դարձել է անորակ, պտուղները փտել են, նվազել է բերքատվությունը:



ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆՇՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԸ

Ֆերմերները գարնան սկզբին վարկ են վերցնում սերմեր ձեռք բերելու համար: Սակայն կլիմայական կտրուկ փոփոխությունները՝ ցրտահարությունը, կարկուտը, երաշտը և ոռոգման ջրի պակասը չեն ապահովում բարձր բերքատվություն, իսկ դա հանգեցնում է եկամուտների նվազման:

Եղանակային անոմալիաների պայմաններում ֆերմերների մոտ 32 %-ը նշում են գերաժախսի մասին: Ավելանում են ծախսերը՝ կապված ոռոգման ջրի խողովակաշարի և պոմպի ձեռքբերման, էլեկտրաէներգիայի սպառման, միջատների դեմ պայքարի միջոցառումների ավելացման, անբերրի հողի պարարտացման համար, հետևաբար նվազում է ստացված



ԱԳՐՈՔԻՄԻԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

մշակաբույսերի
հիվանդությունների աճ



թունաքիմիկատների
լայն կիրառություն



օգտակար
օրգանիզմների վնասում



փոշոտող
միջատների
նվազում




սինթետիկ
պարարտանյութերի
բացասական ազդեցություն



Մշակաբույսերի հիվանդությունների աճ



ԱՃՈՂ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ ՀՀ-ՈՒՄ ԿԱՊՎԱԾ ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ԼԱՅՆ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՀԵՏ




ՀՀ-ում օգտագործվող թունաքիմիկատները

2020	2497.046 տ
2021	2370.892 տ
2022	2406.471 տ
2023	2768.366 տ
2024	3523.550 տ

Ճիշտ քաղաքականության իրականացում կրճատելու համար ԲՎԹ-ների ներկրումը ՀՀ, 2025 թ.-ին ԲՎԹ-ների մասնաբաժինը (%) ՀՀ ներկրված թունաքիմիկատների ընդհանուր ծավալում

Թունաքիմիկատների տեսակները	ԲՎԹ-ների ընդհանուր ծավալները (տ) ըստ տեսակի	Թունաքիմիկատների ընդհանուր ծավալները (տ) ըստ տեսակի	%
I. Միջատասպան	704.8	942.8	74.8
IV. Նեմատոցիդ	5.1	5.1	100
V. Մկնասպան	6.4	10	63.8
VI. Սնկասպան	418.3	946	44.2
VIII. Մոլախոտասպան	561.1	621	90.3
Ընդամենը (տ)	2078.2	2897.5	71.7



2025 թ.-ին ՀՀ ներկրվել է՝
 քլորպիրիֆոս միջատասպան թունաքիմիկատը 141,4 տ,
 գլիֆոսատ մոլախոտասպան թունաքիմիկատը 510,8 տ

ՓՈՇՈՏՈՂ ՄԻՋԱՏՆԵՐԻ ՆՎԱԶՈՒՄ ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ԱԿՏԻՎ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ

PAN-ի անվանացանկում գրանցված համարը	ԲՎԹ-ների ակտիվ բաղադրիչը	զտաքաշը (տ)
204	Իմիդակլոպիրիդ	89
327	Թիակլոպիդ	3
328	Թիամեթոքսամ	58
83	Կլոտիանիդին	1.1
-	Ացետամիդապիրիդ	30
	Ընդամենը	180



ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

Ագրոէկոլոգիական մոտեցումը հատկապես կարևոր է՝ հաշվի առնելով գյուղատնտեսության կառուցվածքը:
Երկրում կա մոտ 387,000 ֆերմերային տնտեսություն, որոնց մեծ մասը փոքր է:

Սա ստեղծում է լավ պայմաններ հետևյալի համար՝

- մշակաբույսերի դիվերսիֆիկացիա,
- ավանդական սորտերի օգտագործում,
- ցածր ինտենսիվության կայուն գործելակերպեր,
- ագրոանտառտնտեսություն (լեռնային շրջաններում),
- արոտավայրերի կառավարում,
- ՎԴԻՊ (թունաքիմիկատների օգտագործման նվազագույնի հասցնելը):

Այս գործելակերպերն արդեն մասամբ կիրառվում են, սակայն անհրաժեշտ է ընդլայնել դրանց օգտագործումը:

ՁԵՐ ԿԱՐԾԻՔԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Ո՞ր ավանդական մշակաբույսերն ու սորտերը՝ կարիք ունեն պահպանման:
- Ինչպե՞ս նպաստել կայուն գյուղատնտեսական գործելակերպերի իրականացմանը:
- Հնարավո՞ր է արդյոք զարգացնել բնապահպանական առումով անվտանգ գյուղատնտեսություն ՀՊՏ-ների շուրջ:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ



AWHHE

«Հայ կանայք հանուն առողջության
և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ
Հասցե՝ ՀՀ, Երևան, 0019, Բաղրամյան պող. 24բ
Հեռ.՝ (+374 10) 52 36 04
Էլ. փոստ՝ office@awhhe.am
Վեբ կայք՝ <http://www.awhhe.am>